ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ապրիլի 2025 թվականի N 573

ԱՊՐԻԼԻ 7-Ի՝ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ որոշում եմ.

1.Ապրիլի 7-ի՝ Մայրության և գեղեցկության օրվա կապացությամբ համայնքի 2025 թվականի բյուջեի գործառական դասակարգման 8.2.4 <Մշակութային միջոցառումների իրականացում> հատվածի 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածից հատկացնել 60000 (վաթսուն հազար) դրամ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի :

2. Հանձնարարել Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Ս.Բաղալյանին ապահովել ֆինանսավորումը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ՝ Գ.Կարապետյանի վրա:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Նոր Հաճըն համայնքի ղեկավարի

2025 թվականի ապրիլի 04-ի N 573 որոշման

ՑԱՆԿ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Գումարի չափը (ՀՀ դրամ)	Հասցե
1.	Արփինե Խաչատրյան Ներսիկի	30000	Գյուղ Մրգաշեն, 7 փ., շ. 4, բն. 20
2.	Հասմիկ Կարապետյան Լևոնի	30000	Ք. Նոր Հաճըն, Սպորտային փ., շ. 2, բն. 21

Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան